

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/2

22 մարտի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 05.03.2013թ-ի նիստում քննության է առնվել «Լինառա» ՍՊԸ 11.02.2013թ-ի բողոքը «ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ 24.12.2012թ. թիվ 1014144 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն չեղյալ է համարվել վերոգրյալ ստուգման ակտի 1-ին կետը, իսկ ստուգման ակտի 4-րդ կետը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 28.04.2011թ. թիվ 1014144 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Լինառա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 24.12.2012թ-ին կազմվել է թիվ 1014144 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 44.712.033 դրամ:

«Լինառա» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ Ընկերությունը ոչ ռեզիդենտ «Պեյստ Ասետ Մենեջմենտ» ՍՊԸ-ից ստացել է ծառայություններ՝ 2008թ.՝ 5.113.598 դրամի, 2009թ.՝ 34.499.027 դրամի և 2010թ.՝ 18.936.364 դրամի չափով, որոնք ընդգրկվել են համապատասխան տարիների համախառն եկամտից իրականացված նվազեցումներում: Ստուգողները նշել են, որ «Պեյստ Ասետ Մենեջմենտ» ՍՊԸ-ից ստացված ծառայությունների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում, ըստ էության, բացակայում է ընկերությանը անմիջականորեն գովազդելու (շուկայի ուսումնասիրության) փաստը: Սրա հիման վրա հետևություն է արվել «Շահութահարկի մասին» «Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 5.2 կետի «ժ» ենթակետի և «Կառավարության 27.11.1998թ. թիվ 753 որոշման պահանջների խախտման մասին: Արդյունքում կատարվել է հետևյալ հաշվարկը. «2008թ-ի, 2009թ-ի և 2010թ-ի համար ներկայացված տարեկան շահութահարկի հաշվարկներում արտացոլված համախառն եկամտից նվազեցվող ծախսերը ներկայացվել է համապատասխանաբար 57825000 դրամ, 105163000 դրամ և 83753000 դրամ, սակայն վերը նշված իրավական ակտերով սահմանված պահանջների չկատարման արդյունքում պարզվեց, որ համախառն եկամտից նվազեցվող փաստացի ծախսերը կազմել են համապատասխանաբար 50211 դրամ, 68147700 դրամ և 68599500 դրամ: Վերոգրյալի արդյունքում ընկերությունը 2008թ-ի, 2009թ-ի և 2010թ-ի հարկվող շահույթը պակաս է ներկայացրել համապատասխանաբար 7614000 դրամի, 37015300 դրամի և 15153500 դրամի չափերով»:

Ինչպես երևում է ակտի շարադրանքից, արձանագրված խախտումը պայմանավորված է բացառապես «Պեյստ Ասետ Մենեջմենտ» ՍՊԸ-ից ստացված գովազդային և մարքեթինգային ծախսերը չընդունելու հանգամանքով, որի համար էլ հիմք է ընդունվել ստուգողների այն պնդումը, թե բացակայում է ընկերությանն անմիջականորեն գովազդելու (շուկայի ուսումնասիրության) փաստը:

«Լինառա» ՍՊԸ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված «Ռոբիկրիս» և «Ռոբիկրիս Դիգայն» ՍՊ ընկերությունների հետ կնքված պայմանագրերով այդ ընկերություններին է առաքել պատվիրատուի հումքով սեփական արտադրության հագուստ և ստացել եկամուտ կատարված աշխատանքների համար: Այսինքն, տեղի է ունեցել «ծառայությունների

արտահանում»՝ նախատեսված ՀՀ կառավարության 27.11.98թ թիվ 753 որոշման 3-րդ կետի <բ> և <ժբ> ենթակետերով:

<Լինառա> ՍՊԸ-ն Ռուսաստանի Դաշնության ընկերությունների և <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի հետ կնքել է նաև եռակողմ պայմանագրեր, որոնցով <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ին պատվիրվել են Ռուսաստանի Դաշնության տարածքում տվյալ արտադրանքի գովազդի և մարքեթինգի ծառայություններ: Սահմանվել է, որ այդ ծառայությունների դիմաց վճարումը պետք է կատարի <Լինառա> ՍՊԸ-ն՝ ոչ ավել, քան ապրանքների արտադրության ծառայությունների արժեքի 35%-ի չափով:

<Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի կողմից Ռուսաստանում իրականացվել են ապրանքների գովազդի և մարքեթինգի ծառայություններ, դրանց դիմաց ներկայացվել են ինվոյսային հաշիվներ, որոնց գումարը կազմել է ապրանքների արտադրության ծառայությունների արժեքի 20 տոկոսը՝ գովազդի համար, և 15 տոկոսը՝ մարքեթինգի համար:

Ստուգողների այն պնդումը, թե բացակայում է ընկերությանն անմիջականորեն գովազդելու (շուկայի ուսումնասիրության) փաստը, չի բացառում գովազդի և մարքեթինգի ծախսերը նվազեցնելու ընկերության իրավունքը: ՀՀ կառավարության 27.11.1998թ. թիվ 753 որոշման 2-րդ կետի <գ> ենթակետի համաձայն, գովազդի ծախսեր են համարվում տարբեր տեսակի տեղեկատվական միջոցներով անորոշ թվով անձանց շրջանում հարկատուների ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին այն տեղեկությունները տարածելու համար կատարվող ծախսերը, որոնք կոչված են ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունն այդ հարկատուների, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ: Այսինքն, գովազդը կարող է վերաբերել կազմակերպությանը կամ ապրանքին: Կազմակերպությանը գովազդ չանելու պայմաններում այդ կազմակերպության արտադրած ապրանքի գովազդն արդեն բավարար է, որ տվյալ ծախսը համարվի գովազդի ծախս:

Նույնը վերաբերում է նաև մարքեթինգի ծառայությանը: Ըստ նույն որոշման 2-րդ կետի <ժ> ենթակետի, մարքեթինգի ծախսեր են համարվում ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրության, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացման հետ կապված ծախսերը: Այսինքն, մարքեթինգը վերաբերում է ոչ թե տվյալ կազմակերպության, այլ՝ ապրանքի և ծառայության առաջխաղացմանը:

Ընկերությունն արտադրում է <Այաս> և <Ռոբի Կրիս> ապրանքային նշաններով հազուստ, գովազդի և մարքեթինգի ծառայությունները մատուցվել են այդ ապրանքատեսակների մասով, ինչն ընկերության արտադրական ծառայություններից եկամուտ ստանալու հետ կապված և անհրաժեշտ ծախս է: Ապրանքի արտահանման համար ստացված ծագման սերտիֆիկատներից ակնհայտ է, որ ապրանքներն ունեն <Այաս> և <Ռոբի Կրիս> ապրանքային նշանները, <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գովազդային նյութերից ակնհայտ է, որ գովազդվել են այդ ապրանքատեսակները:

- Այսպիսով, գովազդի և մարքեթինգի ծախսերը նվազեցնելն իրավաչափ է քանի որ՝
- գովազդի և մարքեթինգի ծառայությունները վերաբերում են ընկերության արտադրած ապրանքներին, հետևաբար ապահովում են ՀՀ կառավարության 27.11.98թ. թիվ 753 որոշման 2-րդ կետով սահմանված չափանիշները.

- դրանք ապահովում են ապրանքների արտադրությունից ստացվող եկամուտը և անհրաժեշտ են այդ եկամուտը ստանալու համար.

- այդ ծախսերը չեն գերազանցում ՀՀ կառավարության 27.11.1998թ-ի թիվ 753 որոշման 3-րդ կետի <բ> և <ժբ> ենթակետերով սահմանված սահմանաչափերը:

Վերոգրյալից ելնելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, <Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին> հրահանգի 5.2 կետի <ժ> ենթակետի և ՀՀ կառավարության 27.11.1998թ. թիվ 753 որոշման պահանջների խախտումների մասին ակտի 1-ին կետում արված հետևությունն անհիմն է:

Ավելացված արժեքի հարկի մասով.

ստուգման ակտի 4-րդ կետի 1-ին պարբերությունով արձանագրվել է, որ 2008թ. 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում պակաս ԱԱՀ է դեբետագրվել 538.900 դրամ: Նույն

պարբերությամբ այդ գումարը համարվել է լրացուցիչ վճարման ենթակա գումար և դրա վրա հաշվարկվել է տուգանք 50 տոկոսի չափով: Եթե ԱԱՀ-ն պակաս է դեբետագրվել, ապա դա չի կարող առաջացնել լրացուցիչ գումարի վճարում, հակառակը, պետք է վճարման ենթակա հարկը պակասեցվեր: Իրականում այդ գումարի չափով ԱԱՀ-ի պակաս կամ ավել դեբետագրում տեղի չի ունեցել:

Ակտի 4-րդ կետի 2-րդ պարբերությամբ նշված է, որ 2009թ. 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում ավել ԱԱՀ-ի գումար է դեբետագրվել 542.000 դրամի չափով: Այդպիսի փաստական հանգամանք նույնպես չկա և լինել չի կարող, քանի որ 2009թ. 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով դեբետագրված ընդհանուր գումարը կազմում է ընդամենը 422.900 դրամ, որի հիմնական մասն իրավաչափ է, հիմնված է պատշաճ հարկային հաշիվների վրա: Այս եռամսյակի ավել դեբետագրված գումարն ընդամենը կազմում է 43.900 դրամ՝ կապված <Արմենիա միջազգային օդանավակայան> ՓԲԸ-ից ստացված և տեղեկություններում ներառված հաշիվների հետ, որոնց մասով ԱԱՀ-ի դեբետագրում չպետք է կատարվեր, սակայն կատարվել է:

Ստուգման ակտի 4-րդ կետի 5-րդ պարբերությունով արձանագրվել է. <Ընկերությունը ոչ ռեզիդենտ <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ից ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ստացել է ծառայություններ, որի համար <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 20 հոդվածի համաձայն վերջինիս փոխարեն դուրս չի գրել հարկային հաշիվ և չի ներկայացրել տեղեկություն, սակայն ստացված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ի գումարները առանձնացրել է՝ արտացոլելով 2008թ.-ի 4-րդ, 2009թ.-ի 2-րդ, 3-րդ ու 4-րդ եռամսյակների և 2010թ.-ի 1-ին ու 12-րդ ամիսների ԱԱՀ-ի հաշվարկների 13-րդ տողում: Նշված գործարքների հետ կապված վերը նշված նույն հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկների ԱԱՀ-ի դեբետային մասում ընդգրկվել ու հետաձգվել են ընդամենը 11.110.000 դրամ ԱԱՀ-ի գումարներ, որն ընկերությունն ավելացրել է 2011թ.-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարում՝ արտացոլելով հաշվարկի 16.2 տողի <ա> սյունակում>:

Նշվածը որակվել է որպես <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, որի հիման վրա՝ նույն օրենքի 43-րդ հոդվածով հարկ է առաջադրվել 11.110.300 դրամ և տուգանք՝ 5.555.150 դրամ:

Ընկերությունը գտնում է, որ ակտի այս մասի հիմք հանդիսացած՝ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի խախտումը տվյալ դեպքում բացակայում է:

Ինչպես արդեն նշվեց, <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ից ստացված գովազդային և մարքեթինգային ծառայությունները կապված են ընկերության արտադրական գործունեության հետ և անհրաժեշտ են դրանից ստացվող եկամտի համար: Այսինքն, տվյալ ծառայությունները <ոչ արտադրական>, <ոչ առևտրային> որակելու հիմքեր չկան ինչը նշանակում է, որ <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետը սխալ է կիրառվել:

Ինչ վերաբերում է արձանագրված այն փաստին, թե ընկերությունը ոչ ռեզիդենտի փոխարեն դուրս չի գրել հարկային հաշիվ և չի ներկայացրել տեղեկություն, ապա այդ փաստը նույնպես իրականությանը չի համապատասխանում: Ընկերությունը հիմք ընդունելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, ստացված գովազդային և մարքեթինգային ծառայությունները համարել է ՀՀ-ում մատուցված և նույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի, 20-րդ հոդվածի պահանջներով դուրս է գրել հարկային հաշիվներ՝ համապատասխան ԱԱՀ-ի գումարները ԱԱՀ-ի հաշվարկներում ձևակերպելով կրեդիտային և դեբետային մասերում: Հարկային հաշիվ դուրս չգրելու և տեղեկություն ներկայացված չլինելու մասին հետևությունները հիմնված են այն հանգամանքի վրա, որ հարկային հաշիվներում ծառայություն մատուցող <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի փոխարեն շփոթմամբ նշվել են ՌԴ կազմակերպությունների անվանումները: Սակայն ծառայություն մատուցողի ՀՎՀՀ-ն բոլոր դեպքերում նշվել է <Լինառա> ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն: Հարկային հաշիվներում հղում է

կատարված ապրանքների գովազդի և մարքեթինգային ծառայությունների պայմանագրերին, որոնցով ծառայություն մատուցողը հանդիսանում է <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ն:

Հարկային հաշիվներում <Լինառա> ՍՊԸ ՀՎՀՀ-ն լրացնելու հանգամանքը նշանակում է, որ հարկային հաշիվները դուրս են գրվել օրենքի պահանջին համապատասխան, հարկային հաշվին ներկայացվող կարևոր վավերապայմաններն ըստ էության պահպանվել են, թերացումը կայանում է միայն նրանում, որ ծառայություն մատուցողի անվանումը սխալ է նշվել, ինչը սակայն տվյալ դեպքում էական համարվել չի կարող, քանի որ մյուս էական պայմաններն ապահովված են, իսկ պայմանագրի վրա հղումը թույլ է տալիս միանշանակ նույնականացնել իրական ծառայություն մատուցողին:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Չարենցավանի SՀS 24.12.2012թ. թիվ 1014144 ակտի 1-ին և 4-րդ կետերը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ընկերությունը ոչ ռեզիդենտ <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ից 25.12.2008թ-ին ստացել է 5.113.598 դրամի, 08.04.2009թ-ին՝ 34.499.027 դրամի և 2010թ.՝ 18.936.364 դրամի չափով ծառայություններ, որոնք ընդգրկվել են համապատասխան տարիների համախառն եկամտից իրականացված նվազեցումներում:

<Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ից ստացված ծառայությունների վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում, ըստ էության, բացակայում է ընկերությանն անմիջականորեն գովազդելու (շուկայի ուսումնասիրության) փաստը:

Արդյունքում հիմք ընդունելով <Շահութահարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, <Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին> հրահանգի 5.2 կետի <ժ> ենթակետի և ՀՀ կառավարության 27.11.1998թ. թիվ 753 որոշման պահանջների դրույթները ստուգման ակտով արձանագրվել է, որ ընկերությունը 2008թ-ի, 2009թ-ի և 2010թ-ի հարկվող շահույթը պակաս է ներկայացրել, համապատասխանաբար՝ 7614000 դրամի, 37015300 դրամի և 15153500 դրամի չափերով:

Քննարկվող դեպքում ստուգման ընթացքում չեն ընդունվել <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի կողմից մատուցված գովազդային և մարքեթինգային ծառայությունների գծով ընկերության կատարած ծախսերը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ներկայացված փաստաթղթերում, ըստ էության, բացակայում է ընկերությանն անմիջականորեն գովազդելու (շուկայի ուսումնասիրության) փաստը: Այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

<Լինառա> ՍՊԸ-ն Ռուսաստանի Դաշնությունում գրանցված <Ռոբիկրիս> և <Ռոբիկրիս Դիզայն> ՍՊԸ-ների հետ կնքված պայմանագրերի համաձայն, վերջիններիս է առաքել Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքներ: Ընդ որում, <Լինառա> ՍՊԸ-ի և <Ռոբիկրիս Դիզայն> ՍՊԸ-ի հետ 24.05.2010թ. կնքված թիվ 37 պայմանագրի 2-րդ կետով սահմանվել է, որ <Լինառա> ՍՊԸ-ն իր վրա է վերցնում երրորդ կողմի ներգրավման պարտավորությունը՝ ռուսական շուկայում ապրանքների առաջխաղացման համար:

<Լինառա> ՍՊԸ-ն ռուսական շուկայում իր կողմից առաքված ապրանքների առաջխաղացումն ապահովելու նպատակով կնքել է եռակողմ պայմանագրեր, որոնցով երրորդ կողմին՝ <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ին, պատվիրել է Ռուսաստանի Դաշնության տարածքում մատուցել ապրանքների գովազդի և մարքեթինգի ծառայություններ: Պայմանագրերով նախատեսվել է, որ այդ ծառայությունների դիմաց վճարումը պետք է կատարի <Լինառա> ՍՊԸ-ն՝ ոչ ավել, քան ապրանքների արտադրության ծառայությունների արժեքի 35%-ի չափով:

Հարկ է նշել նաև, որ պայմանագրերով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ծառայությունները չմատուցելու դեպքում <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ն բաց թողնված եկամտի համար <Լինառա> ՍՊԸ-ին վճարում է փոխհատուցում: Նշված հանգամանքը

վկայում է, որ ապրանքների գովազդի և մարքեթինգի ծառայությունների մատուցման համար <Լինառա> ՍՊԸ-ի կողմից ծախսված գումարներն անհրաժեշտ են եղել վերջինիս եկամտի ստացման համար:

<Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի կողմից մատուցվել են պայմանագրերով նախատեսված ապրանքների գովազդի և մարքեթինգի ծառայությունները, որոնց դիմաց ներկայացվել են համապատասխան հաշիվներ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության կողմից գովազդի և մարքեթինգի գծով կատարված ծախսերը անհրաժեշտ են եղել եկամտի ստացման համար, դրանք բավարարել են << կառավարության 27.11.98թ. թիվ 753 որոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանված չափանիշներին, հետևապես բավարարել են նաև <Շահութահարկի մասին> << օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը եզրակացնում է, որ գովազդի և մարքեթինգի գծով կատարված ծախսերը հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվել են << օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ստուգման ակտով ԱԱՀ-ի գծով արձանագրված խախտումների վերաբերյալ:

Ստուգման ակտի 4-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ընկերությունը ոչ ռեզիդենտ <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ից ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ստացել է ծառայություններ, որի համար <ԱԱՀ-ի մասին> << օրենքի 20 հոդվածի համաձայն վերջինիս փոխարեն դուրս չի գրել հարկային հաշիվ և չի ներկայացրել տեղեկություն, սակայն ստացված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ի գումարներն առանձնացրել է՝ արտացոլելով 2008թ.-ի 4-րդ, 2009թ.-ի 2-րդ, 3-րդ ու 4-րդ եռամսյակների և 2010թ.-ի 1-ին ու 12-րդ ամիսների ԱԱՀ-ի հաշվարկների 13-րդ տողում: Նշված գործարքների հետ կապված վերը նշված նույն հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկների ԱԱՀ-ի դեբետային մասում ընդգրկվել ու հետաձգվել են ընդամենը 11.110.000 դրամ ԱԱՀ-ի գումարներ, որն ընկերությունն ավելացրել է 2011թ.-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարում՝ արտացոլելով հաշվարկի 16.2 տողի <ա> սյունակում: Իսխատվել է <ԱԱՀ-ի մասին> << օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որի համար կիրառվել են նույն օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել հետևյալը:

<Ավելացված արժեքի հարկի մասին> << օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. <Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող Հայաստանի Հանրապետության անձինք (քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման և պետական մարմինները) այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են հարկային պարտավորություն՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում>:

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն. <Սույն օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնում են տեղեկանք հաշվետու ժամանակաշրջանում իրենց ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների դուրս գրած հարկային հաշիվների և իրենց մատակարարած ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ: ...

Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում հարկային պարտավորություն կրելիս ավելացված արժեքի հարկ վճարող անձինք Հայաստանի

Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի անունից կարող են օրենքով սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ, որոնցում որպես ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար (Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդպիսի կարգ սահմանված լինելու դեպքում) և հարկ վճարողի հաշվառման համար նշում են իրենց համապատասխան հաշվառման համարները: Նշված կարգով դուրս գրված հարկային հաշիվները համարվում են մատակարարի կողմից դուրս գրված>:

Քննարկվող դեպքում ավելացված արժեքի հարկ վճարող անձը համարվել է <Լինառա> ՍՊԸ-ն, որը Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի, այն է՝ <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի անունից պետք է օրենքով սահմանված կարգով դուրս գրեր հարկային հաշիվներ և հարկային տեսչություն ներկայացներ Օրենքի 20-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը: Սակայն, հարկային հաշիվներում և հարկային տեսչություն ներկայացված տեղեկանքներում <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի փոխարեն նշված են այլ կազմակերպությունների տվյալները: Այսինքն, <Պեյստ Ասետ Մենեջմենտ> ՍՊԸ-ի փոխարեն <Լինառա> ՍՊԸ-ի կողմից դուրս չեն գրվել հարկային հաշիվներ և վերջիններիս վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել:

Վերոգրյալից հետևում է, որ 11.110.000 դրամ ԱԱՀ-ի գումարը 2011թ.-ի 1-ին եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չէր:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտի 4-րդ կետի 1-ին պարբերությունով արձանագրվածին, որ 2008թ. 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում պակաս ԱԱՀ է դեբետագրվել 538.900 դրամ, ապա սուգող անձը նշվեց, որ ստուգման ակտում տեղի է ունեցել վրիպակ: Մասնավորապես, <պակաս ԱԱՀ է դեբետագրվել 538.900 դրամ>-ը պետք է կարդալ <ավել ԱԱՀ է դեբետագրվել 538.900 դրամ>:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Չարենցավանի ՏՀՏ 24.12.2012թ. թիվ 1014144 ստուգման ակտի 1-ին կետը, իսկ ստուգման ակտի 4-րդ կետը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ